

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան»<sup>1</sup> աշխատությունն, ընդհանրապես, հայ պատմագրության կարևոր հուշարձաններից է. մեծ է հատկապես նրա աղբյուրագիտական նշանակությունը: Իբրև «տիեզերական պատմություն» այն անհրաժեշտաբար առնչվել է բազմաթիվ սկզբնաղբյուրների, և ըստ այդմ ստեղծվել է բնագրական այնպիսի մի համահավաք երկ, որի մեջ իրենց մասն ու բաժինն են ունեցել հայ պատմագրության գրեթե բոլոր նախընթաց արժեքավոր հուշարձանները:

Ընդհանուր առմամբ «Պատմութեան» աղբյուրները ճշտված են: Բանասերներին վաղուց է հայտնի, որ Վարդան Արևելցին օգտագործել է իրեն նախորդող «երիցագույն» պատմիչների աշխատությունները: Առանձին դեպքերում դրանք սոսկ թվարկվել են, երբեմն բավարար են համարվել տողատակերում կամ ծանոթագրությունների մեջ արված հղումները և միայն հազվադեպ հաստատվել բնագրական համառոտ զուգահեռներով<sup>2</sup>: Քննական բանասիրական խոսք ասելու որոշակի փորձեր են արվել՝ պատմական և աղբյուրագիտական ավելի ստույգ իրողություններ պարզելու և հաստատելու համար: Այս տեսանկյունից առավել ուշագրավ և օգտակար աշխատանքներ են կատարել մասնավորապես Մ. Բրոսեն և Փ.Միլդերմանսը<sup>3</sup>: Մասնակի առումով հետաքրքրական են նաև Տ. Գույումճյանի ջանքերը Մխիթար Անեցու աշխատությունից Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» մեջ պահպանված մի հատվածի առնչությունը<sup>4</sup>:

1 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:

2 Մանրամասն տե՛ս հատկապես Եվսեբիոս Կեսարացի, ժամանակականք երկամասնեայ, մասն Ա և Բ, Վենետիկ, 1818, տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

M. F. Brosset, Additions et éclaircissement à l'Histoire de la Géorgie depuis l'Antiquité jusqu'en 1469 de J.-C., St.-Petersbourg, 1857.

Analyse critique de la Всеобщая История de Vardan, par M. Brosset, St.-petersbourg, 1862, p. 2, 9, 13—24.

E. Dulaurier, Les Mougols d'après les historiens arméniens, extrait de l'histoire universelle de Vardan. Journal Asiatique, 1860, Octobre, Novembre, p. 273—322.

«Всеобщая История Вардана Великого», перевод Н. Эмина (с примечаниями и приложениями), М., 1861. Առաջարանը՝ էջ XVI—XX, ծանոթագրությունները՝ 3—189:

«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսարանեայ, ի Վենետիկ, 1862, Առաջարանը՝ էջ է և տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

J. Muyltermans, La domination arabe en Arménie, Louvain-Paris, 1927, էջ 32—37 և տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությունը Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Առաջարանը՝ էջ 4Ա—4Ե:

D. K. Kouymjian, Mxit'ar (Mekhitar) of Ani on the rise of the Seljuqs, "Revue des études arméniennes, Nouvelle Série, T. VI, Paris, 1969. նույնի՝ Մխիթար Անեցին զաղնավյանների և սելջուկյանների մասին, «Լրաբեր» (հատ. գիտ.), № 4, Երևան, 1972, էջ 74—84:

3 Տե՛ս նրանց նշված աշխատությունները:

4 Տե՛ս նրա նշված հղվածները:

Այդուհանդերձ, պատմագրական նման մի աշխատության աղբյուրագիտական ավելի համակողմանի ու մանրադնին քննությունը մնում է անհրաժեշտություն, որովհետև՝ ա) ճշտված աղբյուրները լրացման ու կրկին ճշգրտման ենթակա են, բ) մի քանի աղբյուրների օգտագործված լինելու հարցը հարկ է վերանայել, գ) միայն հարևանցի ակնարկ է եղել (բացատրությամբ Մխիթար Անեցու երկի նշված հատվածի վերաբերյալ դիտողությունների) այն աղբյուրների հնարավոր օգտագործման մասին, որոնք առ այսօր մեզ չեն հասել, դ) չեն դատորոշված ըստ իրենց մաշր հասցեի այն բոլոր հատվածներն ու տողերը, որոնք Վարդան Արևելցին անմիջաբար փոխառել կամ քաղել է բազմաթիվ աղբյուրներից: Բացի այդ, գրեթե ոչինչ չի ասված այն մասին, թե Վարդան Արևելցին ինչպե՞ս է վերաբերվել իր աղբյուրներին, օգտագործման ի՞նչ սկզբունք ու եղանակ է կիրառել, բնագրական ի՞նչ փոխադարձ լրացումներ կամ ճշտումներ հնարավոր կլինի կատարել նրա և աննշվող աղբյուրների մեջ, հայ և այլ ժողովուրդների մատենագրության համար աղբյուրագիտական ու պատմական ի՞նչ նշանակություն և արժեք կարող են ունենալ նրա մեծաքանակ բանաբաղությունները և այլն, և այլն. սրանք հարցեր են, որ գիտական լուրջ պատասխանի են կարոտ:

Հասկանալի է, նման բազմաթիվ ու բազմազան հարցերի համատեղ քննությունը մի հողվածի սահմաններում պարզապես անհնարին է: Ուստի շատ խորնդիրներ անհրաժեշտաբար թողնելով այլ առիթի, այստեղ ի մասնավորի, բնագրական առարկայական և շոշափելի փաստերի հիման վրա, կփորձենք ավելի հստակ և ստույգ հաստատել այն զուտ պատմագրական բնույթի աղբյուրները, որոնցից Վարդան Արևելցին նյութեր է քաղել անմիջականորեն<sup>5</sup>: Դեռևս անհայտ, այսպես կոչված «թաղված» բազմազան աղբյուրների բացահայտումը ևս թողնելով այլ առիթի, քննության նյութ ենք դարձրել արդեն Վարդան Արևելցու հիշյալ աշխատության և մեզ չհասած մի քանի հայերեն սկզբնաղբյուրների աննշության կարևոր հարցը<sup>6</sup>:

Միանգամայն որոշ է, որ Վարդան Արևելցին ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ ու տարատեսակ սկզբնաղբյուրներ:

Հիմնական աղբյուրներից մեկը, մանավանդ սկզբի էջերի համար, Աստվածաշունչն է եղել: Տվյալ դեպքում դանց ենք առնում նշել առկա աղբյուրագիտական աննշությունները այն պարզ պատճառով, որ դրանց գոյությունը առանց այդ էլ, տարակուսելի չէ և նկատվում է դյուրությամբ: Մնացած աղբյուրների մասին խոսք կլինի առանձին-առանձին, ըստ նրանց ժամանակագրական հարգականության:

Այս առումով Աստվածաշունչից հետո հնագույնը եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրություն»-ն է<sup>7</sup>: Թեև այն միջնորդաբար Մովսես Խորենացու, Ուխտանեսի, Ասողիկի պատմագրական համապատասխան երկերի միջոցով քանիցս

<sup>5</sup> Մրադրել ենք մտափկ սպագայում կազմել և հրատարակության հանձնել Վարդան Արևելցու հիշյալ աշխատության քննական բնագիրը: Բանասիրական-աղբյուրագիտական զգալի աշխատանք կատարել ենք արդեն, որը թույլ է տալիս ասելու, թե այդ առիթով ավելի լայն հնաբաղություններ կունենանք անդրադառնալու դիտականորեն կարևոր բոլոր հարցերին: Ըստ այսմ էլ այստեղ դանց ենք առնում նշելու այն աղբյուրագիտական-բնագրական աննշությունները, որոնք առկա են Վարդան Արևելցու սույն աշխատության և նրա այլ աղբյուրների միջև:

<sup>6</sup> Տե՛ս Փ. Անրարյան, Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» կորած աղբյուրները, «Սիոն», Ա.-Բ., 1980, էջ 24—30:

<sup>7</sup> Եսեբիոս Կեսարացի, ժամանակականք երկմասնեայ, մասն Ա.:

նյութ է մատակարարել Վարդան Արևելցուն, սակայն որոշ է դառնում, որ նա դրանից օգտվել է նաև անմիջաբար: Միջանկյալ ասենք, որ, անտարակույս, որոշակի դժվարություն է ներկայացնում ինչպես սույն, այնպես էլ մյուս մի քանի հիմնական սկզբնաղբյուրներից անմիջաբար արված քաղվածքները դատորոշելը՝ ըստ իրենց բուն պատկանելության, որովհետև դրանք երբեմն նույնաբար, բառացի փոխանցվել են հետագա մեկ կամ ավելի աղբյուրների: Ըստ այսմ, աղբյուրագիտական լայն ու մանրակրկիտ քննությունների կարիք է դրացվում նշտելու համար, թե «Հաւարումն պատմութեան» այսինչ հատվածը կամ համառոտ տեղեկությունը ուղղակի մայր աղբյուրի՞ց է առնված, թե՛ միջնորդաբար հետագա մեկ այլ աղբյուրից: Հաշվի առնելով այս հանգամանքի լրջությունը և գիտական կարևորությունը, յուրաքանչյուր դեպքում ջանացել ենք բժախնդիր լինել առավելագույն շահով:

Այս հիմքով էլ ընտրված են բոլոր այն մեծ ու փոքր հատվածները, որոնք ըստ անհրաժեշտության այստեղ բերվելու են զուգահեռ համեմատությունների համար: Այդպես ենք վարվել նվաբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան»՝ Վարդան Արևելցուն իբրև անմիջական աղբյուր ծառայելու առնչությամբ: Այսպես.

#### Նվաբիոս Կեսարացի

Կամիմ այսուհետև յայսցանէ փոխել ի փինիկեցոց մատեանսըն... Յորս գրեալ է՝ թէ տաճարն Երուսաղէմի շինեցաւ ի Սողոմոնէ արքայէ կանխագոյն ամօք Ճեթիւք (143), և ամսովք ութիւք՝ քան զշինել տիրացոց զԿարբեղոն... Զբռնացելոյն Երուսաղէմացոց զՍողոմոնէ ասեն առաքեալ առակս առ Իրովմայ... Յանձն առեալ Իրովմայ, և ոչ լեալ բաւական առեղծուլ զառակսն, բազում ինչ յընչից ի պատժոց տոյժս ծախեալ: Անդ դախր ոմն Արղամանոս անուն՝ այր կորովի, զարկեալ առասպելսն Սողոմոնի լուծանել. միանգամայն և այլ ևս առ նոյն արկանել. զորս շառեղծոյր Սողոմոն. և բազում ինչ Իրովմայ տուժէր: (էջ 173, 176—177):

#### Վարդան Արևելցի

Կայ ի գիրս փինիկեցոցն, եթէ տաճարն յԵրուսաղէմ շինեցաւ հարիւր քառասուն և երեք ամօք յառաջ քան զշինելն Տիրացոցն զԿարբեղոն. և գրեն առակս ինչ առ միմեանս Սողոմոն և Քիրամ. և ոչ կարէր Քիրամ լուծանել զՍողոմոնին. բայց գտաւ այր ոմն, Արղամանոս անուն ի Տիրոս՝ որ կարողանայր առեղծուլ, այլ և գրէր առ Սողոմոն, և տարակուսէր Սողոմոն: (էջ 23):

Նույնությունն ակներև է: Միայն թե Վարդան Արևելցու հատվածում Արղամանոսը դարձել է Արղամանոս, Իրովմը՝ Քիրամ: Պարզ է, որ առաջինը Դ և Գ տառերի գրչական շփոթության, իսկ երկրորդը՝ Իրովմին Աստվածաշնչի Քիրամի՞ հետ նույնացման արդյունք է:

Տ. Բ. Քաղատրուհեանց, ԳԼ. Բ., 11:

Պատկերը գրեթե միևնույնն է նաև հետևյալ դեպքում:

### Եվսերիոս Կեսարացի

### Վարդան Արևելցի

Քանզի է Մովսիսի յանապատին  
 Խ ամ և Յասովայ Իէ, յետ որոյ դա-  
 տաւորացն և ալլազգեացն նՄ. որ-  
 պէս առաքեալ ասէ. և Դատաւորաց  
 գիրք նմին դաւանեն. յետ որոց  
 Սամուէլի և Սաւուղայ Խ ամ, ապա  
 և Դաւթի Խ, և Սողոմոնի Դ. մինչ  
 ի տաճարին կազմած. և միանգա-  
 մայն ամենայն Ո (600): (էջ 164—  
 165):

...քառասուն ամ Մովսեսին,  
 քսան և եօթն ամ Յեսուայն, որ է  
 վաթսուն և եօթն ամ. և շորեքհա-  
 ռիւր և յիսուն ամ դատաւորացն,  
 ծառայութեամբ ալլազգեաց՝ որ է  
 հինգհարիւր և եօթնևտասն. յետ  
 որոց Շամուէլ և Շաւուղ քառասուն  
 ամ, և քառասուն ամ Դաւթի, լինի  
 իննսուն և եօթն, և շորս ամ Սողո-  
 մոնին, և լինին միանգամայն ամբ  
 վեցհարիւր և մի: (էջ 23):

Բացահայտ է, որ Վարդան Արևելցին իր սկզբնաղբյուրից օգտվել է բա-  
 րացի Տարրերությունն այն է լոկ, որ Վարդան Արևելցու մոտ «Շամուէլ և Շաւուղ»  
 է, փոխանակ՝ «Սամուէլի և Սաւուղայ», իսկ տարեթվերի ընդհանուր դումա-  
 րը՝ 601, փոխանակ՝ 600-ի: Շ-ի կիրառութիւնը Ս-ի փոխարենն ասորական ար-  
 տասանութեան գրականութեան է, որը, թերևս, այս դեպքում վկայում է այն մասին,  
 թե Վարդան Արևելցու ձեռքի տակ եղած օրինակում բնագիրն այդպիսին է եղել:  
 Ինչ վերաբերում է տարեթվերի դումարին, ճշմարիտն այն է, որ Եվսերիոսի  
 հատվածում 600 է գրված սխալմամբ, քանի որ այնտեղ նշված տարեթվերի գու-  
 մարը ևս հավասար է 601-ի: Իսկ դա ըստ երևույթին, արդյունք է այն բանի, որ  
 այնտեղ ևս նախապես գրված է եղել ՈԱ. (601) և հետագայում ընդօրինակու-  
 թյունների ժամանակ Ա.-ն դուրս է բնկել<sup>9</sup>:

Մեր եզրակացութիւնը ավելի ամրապնդելու համար բերենք ևս մեկ զուգա-  
 հեռ.

### Եվսերիոս Կեսարացի

### Վարդան Արևելցի

Արտաշէսի ամք ԽԱ: Առ սովաւ  
 Եզր... Այդ և նեէմիա տակառա-  
 պետ ճանաչէր, որ հրամանաւ թա-  
 գաւորին էջեալ յերկիրն Հրէաստա-  
 նի՝ շինէր զԵրուսաղէմ, և պատէր  
 դրաղաքն պարսպօք... Դարեհ ամս  
 ԺԹ: Արտաշէս ուշեղ ամս Խ: Ով-  
 քրսոս ամս ԻԶ: Արսէս ամս Դ:  
 Դարեհ ամս Զ: Յետ որոց Աղեք-

Արտաշէս երկայնաբազուկ քա-  
 ռասուն և մի ամ, առ սովաւ Եզ-  
 րաս և նոյնմի տակառապետ եկին  
 յԵրուսաղէմ և շինեցին զպարիսպն:  
 Դարեհ հարճորդի ամս իննևտասն.  
 Արտաշէս, ամս քառասուն, առ  
 սովաւ Իսթեր: Արտաշէս Ոքոս,  
 ամս շորս. Դարեհ Արշամայ, ամս  
 վեց. զոր սպան Աղեքսանդր, և

<sup>9</sup> Եվսերիոսը 600 տարիները բաժանել է 5 ազգերի միջև, յուրաքանչյուրին՝ 120: Բայց տրված  
 տարեթվերի դումարը, 1-ով ավելի է: Հնարավոր ենք համարում նաև այն, որ և՛ Եվսերիոսի, և՛  
 Վարդան Արևելցու մոտ Սողոմոնի Դ տարին նախապես Եվսերիոսի բնագրում եղել է Գ տարի,  
 հետագայում Գ և Դ տառերի շփոթութիւն է տեղի ունեցել:

սանդրոս Մակեդոնացի երարձ  
զաէրութիւնն պարսից և թագաւորեաց  
ամս Զ... ՃՂէ: Յետ Աղէքսանդրի  
վախճանելոյ՝ Եգիպտոսի և Աղէքսանդրիայ  
քաղաքի թագաւորեցին այսորիկ,  
ա. Պաղոմէոս Ղազոսեայ ամս Խ. Բ. Պաղոմէոս  
Փիղաղեղփոս ամս ԻԸ: Առ սովա  
երբայեցոց զիրք սուրբք ի յոյն  
լեզու թարգմանեցան, և յԱղէքսանդրիա  
քաղաքի և մատենից տունս  
եղան: գ. Պաղոմէոս Եւերգեաէս  
ամս ԻԴ: դ. Պաղոմէոս Փիղապատովր  
ամս ԻԱ: Ե. Պաղոմէոս Եպիփանէս  
ամս ԻԲ: զ. Պաղոմէոս Փիղոմէատոր  
ամս ԼԴ: Առ սովա թագաւորեաց  
ասորոց Անտիոքոս... թէ զիարդ  
Անտիոքոս զազգն Տրէից ի Տեթանոսութիւն  
զարձուցանել բռնադատէր... (էջ 190):

Ինչպես տեսնում ենք, անմիջական աանշուօյունն ակնհայտ է: Սոսկ տարեթվերի փոքր անհամապատասխանութիւն կա: Այս դեպքում զրշազրական Տնարավոր վրիպակներից բացի, կարծում ենք, ենթադրելի է նաև հետևյալը. սույն հատվածը տարբեր խմբագրութիւններով առկա է նաև մի քանի այլ հեղինակների երկերում<sup>10</sup>: Ընդհանրութիւններ ամենից ավելի նկատելի են Ասողիկի երկում առկա հատվածի համեմատութիւնը: Վարդան Արևելցին ձեռքի տակ ունենալով նաև հիշյալ հեղինակների երկերը, հավանաբար, թվական փոփոխութիւններ է կատարել իր բնագրում, գուցե և իր ու հիշյալ հեղինակների տրամագրութիւն տակ եղել է Եպիփոսի «Ժամանակագրութեան» մեկ այլ, քիչ տարբեր բնագրինակութիւն, ինչ որ նույնչափ հավանական ենք համարում<sup>11</sup>:

Կարելի է վկայակոչել բնագրական այլ այսօրինակ բառացի նմանութիւններ ևս, սակայն այսքանը լիովին բավական է հաստատելու, որ Եպիփոսի «Ժամանակագրութիւն»-ը Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» համար իրապես իբրև անմիջական սկզբնաղբյուր է ծառայել:

Հարկ ենք համարում միջանկյալ նշել հետևյալը: Վարդան Արևելցին տարբեր առիթներով հիշատակութիւններ է թողել այն մասին, որ ինքը այս կամ

<sup>10</sup> Հմմտ. Մովսէս Խաւնաթի. Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 14—20; Ա. Արախամյան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երևան 1944, էջ 358—359, 365, 370 և այլն: Խովհա Արծրունի. Պատմութիւն տանն Արծրունեաց, ի յոյս էած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 6—9, 14—20 և այլն: Սամվել Անեցի, Հաւաքումնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 5—32 և այլն:

<sup>11</sup> Մ. Ավգերյանի կարծիքով, Սամվել Անեցին օգտագործել է Եպիփոսի «Ժամանակագրութեան» մեկ հասած ձեռագիր օրինակը (հատ. Բ, էջ 233): Մինչդեռ Սամվել և Վարդան Արևելցու քաղած որոշ հատվածներում տարբերութիւններ կան, որոնք, կարծում ենք, նաև տարբեր բնագրինակութիւններից բխած լինելու արդյունք են:

այն տեղեկությունը, միտքը հաղորդում կամ ճշտում է ըստ Արիստոտելի, Եսիրեմ Ասորու, Եսիփան Կիպրացու, Ենանոսի, Լուկիանոս ոմն փռանկի, Սոկրատ պատմիչի<sup>12</sup>: Սակայն այդ մանր տեղեկությունները, որոնք տվյալ դեպքում ավելի կրոնափիլիսոփայական, քան պատմական բնույթի են, հակառակ տրված անունների իսկ հիշատակության դժվար է հղել ստույգ հասցեի: Միջնադարյան բնագրերը, ինչպես հայտնի է, լի են նման հիշատակություններով, որոնք կարող էին մեկը մյուսին փոխանցվել միջնորդաբար և անպայման շրխել մայր սկզբնաղբյուրից: Այս դեպքում ևս կարող էր տեղի ունենալ նույնը, ուստի և առանց վերապահության շնք կարող ասել, որ Վարդան Արևելցին այս առիթով վերոհիշյալ հեղինակների և այլոց (որոնց անունները չի հիշում) երկերը ձեռքի տակ ունեցել է իրրև անմիջական աղբյուր, թեև չի բացատրվում նաև այդ հնարավորությունը:

Վարդան Արևելցին Հայաստանում քրիստոնեության տարածման, Գրիգոր Լուսավորչի վարքի ու գործունեության, առնչակից այլ խնդիրների վերաբերյալ իր նյութերը քաղել է ոչ թե Ագաթանգեղոսի, այլ Հովհան Մամիկոնյանի (Զենոբ Գլակ) աշխատությունից: Բնագետև նա Ագաթանգեղոսին հիշատակել է իրրև աղբյուր, սակայն պարզվում է, որ դա Սերենոսի երկից է գալիս<sup>13</sup>: Վարդան Արևելցու այս կապակցությամբ վկայակոչած մանրամասները, ըստ մեծի մասին, պակասում են մյուս հեղինակների մոտ, սակայն առկա են Հովհան Մամիկոնյանի երկում<sup>14</sup>: Միայն Ուխտանեսի աշխատության մեջ են պահպանված դրանց առնչվող որոշ տեղեկություններ, որոնք, անտարակույս, քաղված են նույնպես «Պատմութիւն Տարօնոյ» երկից<sup>15</sup>:

Վարդան Արևելցու երկում առկա որոշ տարբերություններ թեև միաժամանակ վկայում են, որ նա նաև բանավոր կամ գրավոր այլ աղբյուր էլ է ունեցել<sup>16</sup>, սակայն, տարակույս լինել չի կարող, որ անպայման Հովհան Մամիկոնյանի աշխատությունից է օգտվել ուղղակիորեն: մանավանդ, երբ վերոհիշյալ մանրամասներից բացի, նկատի ենք ունենում Գեմետրեի և Գիսանեի հայտնի դրույցը, որն այստեղ պարզապես համառոտաբար վերապատմված է ըստ այնմ: Կան և բառացի քաղվածքներ, ինչպես հետևյալը.

### Հովհան Մամիկոնյան

...որ թէպէտ և բազում անգամ խնդրեաց սուրբ Գրիգոր զնշխարս սուրբ կարապետին, ոչ էառ յանձն (Ղևոնդ—Փ. Ա.) տալ մինչև հրաման ի տեսանէ հասանէր ի գիշե-

### Վարդան Արևելցի

...Եւ հայցեաց սուրբն Գրիգոր (զնշխարս Կարապետին Յովհաննու-Փ. Ա.), և ոչ կամէր տալ, մինչև առ հրաման ի հրեշտակէն սրբոյ սուրբն Ղևոնդ, որ ետ ապա

12 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 4, 7, 24, 33, 44:

13 «Սերենոսի-եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 2:

14 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ. էջ 36—38: 2. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 68—74:

15 Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 78—79, 81—83:

16 Մեր համեմատությունները միաժամանակ ցույց են տալիս, որ Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» աշխատության և Գրիգոր Լուսավորչին նվիրված իր իսկ ներբողի միջև փաստադրական փոխադարձ առնչություններ կան: Ներբողը հորինված է ավելի վաղ, ուստի և հավանաբար, ծառայած է որպես աղբյուր: Հմմտ. «Սոփերք հայկականը», Ե., Վենետիկ 1885, էջ 39—48:

րին վերջնումն բաժանել զկէսն և տալ ցնա... Ետ նոցա զնշխարս Աթանագինէի վկայի... Տայր և սրբոյն Գրիգորի երկու լուսաւոր ահունս, զոր տուեալ էր նմա Հոսովմայ հայրապետն: ...Զի սեք էին և զիսաւորք... ...Զի կոոցն, որ յայսմ տեղոջ էին, պատճառ այս է. Գեմետր և Գիսանէ իշխանք էին Հրնդկաց և եղբարք ցեղով. և փախուցեալ ի թագաւորէն Հնդկաց, հալածեցան և եկին մինչև յաշխարհս յայս: Եւ իբրև եկին առ թագաւորն Հայոց Վաղարշակ, և նա ետ զերկիրն Տարաւնոյ յիշխանութեամբ նոցա...: Եւ յետ հնգետասան ամի ետպան թագաւորն զերկոսեանն և զտեղիսն իշխանութեամբ ետ որդոց նոցա... (էջ 76—78, 107—108):

Մնացածը, կարծում ենք, պարզ է:

Վարդան Արևելցու ամենահիմնական աղբյուրներից է Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը: Նրան է զիմել բազմաթիվ առիթներով, հաճախ ըստ պատշաճի համառոտելով ընդգրկվելիք պատմական նյութը, երբեմն էլ բառացի բազմաձևեր կատարելով: Քիչ չեն և այն դեպքերը, երբ հետագա պատմիչների երկերի միջոցով են նրանից նյութեր փոխանցվել Վարդան Արևելցու հիշյալ աշխատության մեջ: Մենք թեև հանդամանորեն ճշտել ու զատորոշել ենք այս երկու բնագրերի փոխադարձ բոլոր առնչությունները, բայց դրանց մասին ևս ավելի մանրամասն խոսք կլինի հետագայում: Այս նկատառումով էլ կփորձենք մատնանշել միայն ուղղակի առնչություններից՝ բառացի բազմաձևերից մի քանիսը, որպեսզի առավել ստույգ ու ակնհայտ նկատվի, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը Վարդան Արևելցու սույն աշխատության իրոք անմիջական աղբյուրներից է:

### Մովսես Խորենացի

Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան, և զնորին ուսար, զոր անուանեաց Արտաշէս... Եւ եղև այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց—միոյ որդոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլոց ուստե-

երկու լուսաւոր ահունս, զոր երտուեալ նմա հայրապետն Հոսովմայ և զնշխարս սրբոյն Աթանագինեայ... Զոր բերեալ սերմանէր յերկիրս հայոց, զհասարակն յԱշտիշատ պահելով, ի տեղիս Գեմետրեայ և Գիսանեայ, երկուց եղբարց հնդկաց իշխանաց, որք եկին առ Վաղարշակ արքայ, և զկնի հնգետասան ամի սպանան ի տեղոջն, որոց որդիքն ժառանգեցին զՏարուն. և էին զիսաւորք և զեռև կերպարանին ոմանք՝ ծամս պահելով...: (էջ 39):

### Վարդան Արևելցի

Արդ, կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ, պահէ առ ինքն զԱրշակ զորդի իւր և զԱրտաշէս որդի նորա, և զայլ արքայազունսն առաքէ ի Հաշտեան գաւառն: Եւ եղև այս ի կրօնս ամենայն թագաւորաց, զմի ոք ունել ընդ ինքեանս ժառանգ և զայլսն ի Հաշտէնս առաքել, զի կայցեն յազա-

րաց և դատերաց, գնալ ի կողմանս  
Հաշտենից՝ յազգին ժառանգու-  
թիւն:

Բայց Վաղարշակ յետ այսպի-  
սեաց արութեանց և բարեկարգու-  
թեանց մեռանի ի Մծբին, թագաւո-  
րեալ ամս քսան և երկուս:

Արշակ որդի Վաղարշակայ թա-  
գաւորէ ի վերայ Հայոց ամս երեք-  
տասան... պատերազմելով ընդ  
պոնտացիս, և նշանակ եթող յեզեր  
ժովուն մեծի. զնիզակն իւր, ասին,  
զբոլորատէգ, որ էր արեամբ զեռ-  
նոց մխեալ, ձգեալ ի հետեակուց՝  
խորագոյնս նստոյց յերկանաքար  
արձանին, զոր կանգնեաց ի ծովե-  
զերն: Չայս արձան բազում ժամա-  
նակս պատուեցին պոնտացիք որ-  
պէս զառ ի յաստուածոցն գործ:  
(էջ 118—119):

տութեան: Թագաւորեալ Վաղար-  
շակայ ամս քսան և երկու, մեռա-  
նի ի Մծբին. և թագաւորեաց Ար-  
շակ որդի նորա ամս քսան և երեք:  
Սա կառոյց զնիզակն յորձաքարի  
յեզերս ծովուն Պոնտոսի, մխեալ  
արեամբ թիւնաւոր սողնոց, զոր  
պաշտեցին պոնտացիք իբրև զգործ  
աստուծոյ: (էջ 31—32):

Քիչ հետո շարունակելով իր Պատմութեանը, Վարդան Արևելցին վերստին  
չիմու՞մ է Մովսես Խորենացու աշխատութեանը և բառացի բաղում հետեյալը.

### Մովսես Խորենացի

### Վարդան Արևելցի

Քանզի էին Արշարի թագաւորի  
որդիք երեք և դուստր մի...

Իսկ Արգարու համոզեալ զնոսս  
խաղաղանալ, ի մէջ ամենեցուն  
հաստատէ զայս ինչ սահմանելով.  
Թագաւորել Արտաշիսի... դառնա  
ոչ առողջ մարմնով, այլ շարաշար  
ցաւովք ախտացեալ...

Իսկ Արգարու եկեալ ի քաղաքն  
իւր յեզեսիայ... Մառինոս որդի  
Ստորգեայ, առ որ առաքեաց Ար-  
գար երկուս ի գլխաւորաց իւրոց,  
զՄար Իհար րդեաշխն Աղձնեաց և  
զՇամշազրամ նահապետ Ապա-  
հունեաց տոհմին և զԱնան հաւա-  
տարիմ իւր ի քաղաքն Բերբուրին,  
զգացուցանել նմա զպատճառս եր-  
թալոյն իւրոյ յարեւելս... որոց

...մեռաւ Արշաիր թագաւորն  
պարսից, թողեալ երեք որդի և  
դուստր մի, որք վիճէին ի վերայ  
թագաւորութեանն, զորս խաղա-  
ղացոյց հաշտութեամբ Արգար՝  
անդ զնալով. զաւագ որդին Ար-  
տաշէս՝ թագաւորեցուցանէ... և ի  
դառնալն պատահէ նմա ցաւ ուր-  
կութեան: Եւ եկեալ յեզեսիա՝ ա-  
ռաքէ առ Մարինոս զօրավարն  
Հոովմայ զՄարիահա րդեշխն Աղ-  
ձնեաց և զՇամշազրամ նահա-  
պետն Ապահունեաց, և զԱնանէ  
հաւատարիմ իւր, զի մի՛ խորհուրդ  
նենգութեան կարծեսցեն զերթն  
նորա յարեւելս: Եւ պատահեալ Մա-  
ռինեայ յեւթրապոլիս, լուան բա-  
նըս բարիս և ելին յԵրուսաղէմ, և



եկեալ գտին զնա յԵլեթերոյաօ-  
լիս...

Եւ նոցա դարձեալ անտի՝ ելին  
յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր  
Քրիստոս վասն լրոյ համբաւաց  
սքանչելագործութեանցն, որում և  
ականատես եղեալ պատմեցին Ար-  
գարու... (էջ 146, 147—148):

տեսին զՏէրն զի առնէր նշանս մե-  
ծամեծս, և հաւատացին ի նա, և  
բերին զտեսեալ նշանսն Արգա-  
րու... (էջ 34):

Նկատել տանք այստեղ, որ Վարդան Արեւելցին միշտ շէ, որ անվերապահ  
ու միատարր է ընդօրինակում իր աղբյուրները, այլ միաժամանակ համեմա-  
տում է համախոս մի քանի աղբյուրներ ու ըստ այդմ լրացնում անմիջական  
աղբյուրի հաղորդումները: Նման շատ փաստեր կարելի է վկայակոչել: Մասամբ  
այդպիսին են նաև մեր կողմից այստեղ ներկայացված հատվածները:

Վարդան Արեւելցին իրեն աղբյուր օգտագործել է նաև Փափստոս Բուզանդի  
«Հայոց պատմութիւն»-ը, սակայն ավելի շատ Մովսես Խորենացու աշխա-  
տութեան միջոցով: Այստեղ մենք կանգ կառնենք միայն մի քանի փաստի վրա,  
ցույց տալու համար Փափստոս Բուզանդի երկի մասնավորաբար անմիջական  
աղբյուր հանդիսանալը: Թրինակ, Վաչե Մամիկոնյան սպարապետի մահվան  
և նրա հիշատակը եկեղեցական կարգով նշելու վերաբերյալ Վրթանես կաթո-  
ղիկոսի կարգադրության մասին տեղեկությունը Վարդան Արեւելցին քաղել է  
ուղղակի Փափստոս Բուզանդի երկից ու զետեղել այն նյութերի մեջ, որոնք նա  
վերցրել է Մովսես Խորենացու աշխատությունից, նկատելով, որ վերջինիս մեջ  
այդ մասին նշում չկա<sup>17</sup>: Տիրան թագավորի դեմ պարսից կազմակերպած դա-  
վադրությունը թեև համառոտ, բայց ստուգապես պատմում է ըստ Փափստոս  
Բուզանդի<sup>18</sup>: Հիմնականում այդպիսին են նաև Հուսիկ կաթողիկոսի ու նրա Պապ  
և Աթանազիոսի որդիների վերաբերյալ պատմածները<sup>19</sup>: Այնուհետև  
ևս Վարդան Արեւելցին նախապես ըստ Փափստոս Բուզանդի է շարունակում  
պատմել ներսես Մեծի մասին, հատկապես, երբ թվարկում է նրա ծագումը,  
Կեսարիա գնալը, վանքերի, հիվանդանոցների, ուրկանոցների, հյուրանոցների  
հիմնարկումն ու այլ միջոցառումները, Բյուզանդիոն մեկնելն ու արքայվելը<sup>20</sup>:  
Ինչ վերաբերում է ներսես Մեծի և Արշակի ու Պապի հարաբերություններին և  
հակամարտությանը, տվյալ դեպքում Վարդան Արեւելցին արդեն նախապատ-  
վությունը տալիս է Մովսես Խորենացու երկին<sup>21</sup>, թեպետ մեջ ընդ մեջ կրկին  
գիմում է Փափստոս Բուզանդի աշխատությանը: Պապի կողմից ներսես Մեծի  
թունավորվելը ակներևաբար բառացի պատմում է ըստ Մովսես Խորենացու<sup>22</sup>:  
Սակայն երբ անմիջապես նշում է, որ ներսեսի փոխարեն Պապը կաթողիկոսա-  
կան աթոռին բարձրացնում է «զԶունակ ոմն», որի վերաբերյալ Մովսես Խո-

17 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 45: Փափստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, Վաղարշապատ, 1933, էջ 37—38:

18 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 46: Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 62—63:

19 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 46, Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 23, 58—59:

20 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 46—47, Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 78—85:

21 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 47, Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 278—

280, 291—292:

22 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 48, Մովսես Խորենացի, նշվ. աշխ. էջ 305—306:

բննացին ահատարակ ոչ մի հիշատակութիւն շունի (ոչ էլ Ասողիկը, որի երկից նա բառացի քաղել է 3 տող Շահակի կաթողիկոսանայու մասին<sup>23</sup>), նա որոշակի հիմնվում է Փալատոս Բուզանդի հաղորդումների վրա<sup>24</sup>:

Այսպիսով, ավելի քան որոշ է, որ Վարդան Արևելցին Փալատոս Բուզանդի «Հայոց պատմութիւն»-ը օգտագործել է նաև անմիջաբար:

Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոց»-ը Վարդան Արևելցու համար նույնպէս հանդիսացել է անմիջական սկզբնաղբյուր: Վարդան Արևելցին Վահան Մամիկոնյանի կյանքի և ազատագրական գործունեութեան մասին՝ մանկութիւնից մինչև Հայաստանի մարզպանութեան պաշտոնն ստանձնելը, պատմում է պարզապէս խիստ համառոտելով Ղազար Փարպեցու մանրամասն տեղեկութիւնները<sup>25</sup>: Մինչ այդ նա խոսելով Վարդանանց, ավելի որոշակի՝ Միհրնէրսէ՝ հազարապետի, Վարազվաղանի, վերջինիս՝ Վասակ Սյունու փեսան լինելու հանգամանքի, փեսայի, աղջկա և աներ միջև ստեղծված հակառակութեան, Վարդանանց 1232 (?) զինվորների և հոգևորականութեան նահատակութեան մասին, դարձյալ օգտվում է Ղազար Փարպեցու երկից, և ոչ՝ Եղիշեի<sup>26</sup>: Նա, ամենայն հավանականութեամբ, ձեռքի տակ չի ունեցել Եղիշեի «Յաղագս Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատութիւնը, թեկուզև Վարդանանց նահատակութեան՝ իր կողմից նշված վայրն ու ամսաթիվը համապատասխան են Եղիշեի հաղորդմանն այդ մասին<sup>27</sup>: Ըստ երևույթին, նա մեզ անհայտ մի այլ գրավոր աղբյուրի, կամ էլ՝ բանավոր պատումների հիման վրա է այդ նշել: Այլ կերպ, մի՞թե նա ուրիշ ոչինչ չէր քաղի Եղիշեի աշխատութիւնից: Մեզ սույն հետևութեան է բերում նաև հետևյալը: Ինչպէս տեսանք, նա և միայն նա Վարդանանց նահատակների թիվը հասցնում է 1232-ի 1036-ի փոխարեն, ինչպէս հաղորդում են և՛ Եղիշեն, և՛ Ղազար Փարպեցին<sup>28</sup>: Ո՛չ «Յայսմաւուրք»-ի մեջ և ո՛չ էլ այլուր շահնդիպեցիներ նման հաշվարկի: Չենք կարծում, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել զրշազրական սխալ, որովհետև ՌԼԶ և ՌՄԼԲ տառերի խմբերը, որոնցով արտահայտված են եղել 1036 և 1232 թվերը, հազիվ թե կարող էին երբևէ շփոթել մեկը մյուսի հետ:

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աշխատութեան անմիջական աղբյուրներից է Սեբեոսի «Պատմութիւն»-ը<sup>29</sup>: Վերջինիս Պետերբուրգի հրատարակութեանը (1879 թ.) կից հավելվածաբար տրված են Վարդան Արևելցու աշխատութիւնից երկու հատվածներ, հաշվի առնելով դրանց ուղղակի առնչութիւնը հրատարակվող երկին<sup>30</sup>: Կան և այլ հատվածներ, որոնք նույնն են հաստատում: Բերենք դրանցից մի երկուսը՝ ավելի հստակ եզրակացութիւն գոյացնելու համար:

23 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 48, Ասողիկ, նշվ. աշխ., էջ 73:

24 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 48, Փալատոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 132:

25 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 56—57, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., հասկացված էջ 234, 239, 342—343, 259, 346—347, 290—291, 293—296, 298, 308—310:

26 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 79, 161:

27 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Եղիշե, Վասակ Վարդանայ և հայոց պատմութեան, Երևան, 1957, էջ 182:

28 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Եղիշե, նշվ. աշխ., էջ 120, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 155:

29 Սեբեոսի Եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939:

30 Սեբեոս, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 49—57:

## Սերեոս

...և ի ժամ վախճանին... հաւատաց ի Քրիստոս... և կոչեալ զեպիսկոպոսապետն, որ Երան կաթողիկոս անուանի, մկրտեցաւ ի նմանէ... և հաղորդեցաւ... Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրց նրնջեաց ի բարուք ծերութեան իւրում, և բարձեալ զմարմին նորա քրիստոնէիցն՝ տարեալ եդին ի շիրիմս թագաւորացն: Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա յետ նորա: (էջ 29):

## Վարդան Արեւելցի

Իսկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ ի վախճանն հաւատաց ի Քրիստոս, և կոչեցեալ առ ինքն զԵրան կաթողիկոսն՝ զոր տէր Գիւտ էր ձեռնադրեալ հանդերձ ալլօք եպիսկոպոսօք, ի գնալն իւրում առ Պերող արքայ... ցանկանալով մահու, մկրտեցաւ յԵրանայ և հաղորդեցաւ և զկնի տոկոսաց կատարեցաւ, և թաղեցին զնա քրիստոնեայքս յարքունական զերեզմանս: Եւ առ զթագ նորա որդի նորա Որմիզդ... (էջ 58—59):

Սույնի անմիջական շարունակութիւնը, որտեղ պատմվում է, թե ինչպես Որմիզդին սպանեցին իր դահլիճում, նրա որդին՝ Խոսրովը հաջորդեց նրան և հալածվեց Վահրամից, դարձյալ բառացի քաղված է Սերեոսի երկից<sup>31</sup>: Հետևյալը նույն կարգի քաղվածք է.

## Սերեոս

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունու յաշս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն երկրին Վրկանայ... Կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ... զլեզու իւրեանց մոռացան և դպրութիւն նուագեալք... և հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէցոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Արէլ... և հրամայէ երթալ տեսանել զերկիր իւր... և նստուցին զԱրքահամ զմշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան: Ապա սկսան արկանել հիմն եկեղեցոյն. ժողովեաց ճարտարպետս քարի... Եւ գրեալ զիր ամբաստանութեան բերդակալին և մարզպանին առ արքայ, եթէ «կա-

## Վարդան Արեւելցի

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն թշնամիս նորա և նորա պատուասիրեալ նմա տայ զմարզպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ և բնակեալ ի թուրքաստան անպատին մեծի՝ որ Սագաստանն կոչի, մոռացեալ զլեզու և զդպրութիւն որք տեսեալ զՍմբատ խրախրինէին և նորոգէին զլեզու և զգիր, և զերէց մի նոցա Հարէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի հայրապետին Մովսիսի, հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, և առեալ հրաման յարքայէ՝ զայ տեսանել զերկիր իւր: Եւ եկեալ ի Դուին՝ սկսաւ շինել զփայտաշէն Սուրբ Գրիգորն ի Վարդանայ սրբ-

<sup>31</sup> Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 59, Սերեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 35—36:

րի մերձ է առ բերդն, և վնասակար է ի թշնամույն»։ Տրաման հասեալ յարքայէ, եթէ «բերդն քակեսցի և եկեղեցին անդրէն ի նմին տեղուշն շինեսցի»։ (էջ 61, 65)։

բոյ. և պահնակ բերդին բողոքէ ի Դուռն թէ վնասակար է բերդիս. և ելանէ Տրաման քակել զբերդն և հեռագոյն շինել և խնդացեալ Սմբատ ի փառս Քրիստոսի շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, և տայ ձեռնադրել պատրիարզ դաէր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց... (էջ 59—60)։

Այսքանը այս կապակցութեամբ, կարծում ենք, լիովին բավարար է։

Վարդան Արևելցին տեղեկութիւն է քաղել նաև Մ. Կաղանկատվացու աշխատութիւնից, թեկուզ ընդամենը մի քանի տող<sup>32</sup>։

Ղևոնդի «Պատմութիւն»-ը, թեև համեմատաբար քիչ, ուղղակիորեն առնչվում է Վարդան Արևելցու աշխատութեանը։ Միաժամանակ միջնորդաբար, հետագա այլ հեղինակների երկերի միջոցով ևս, այն փաստագրական նյութ հայթայթել է Վարդան Արևելցու համար։ Բայց մենք այստեղ կփորձենք ցույց տալ երկու երկերի միայն անմիջական կապը, ինչպես որ մտադրվել ենք վարվել մեր սույն հոդվածում նաև մյուս բոլոր աղբյուրների կապակցութեամբ։ Դարձյալ զիմենք քննադրական համեմատական զուգահեռների հավաստի եղանակին, թեկուզև մեկ օրինակով։

### Ղևոնդ

### Վարդան Արևելցի

... զի զԻ (20) ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետ՝ մեռանի։ Յետ է այնորիկ փոխանորդէ զիշխանութիւնն Մահմետի Աբու Բարը և Ամր և Օթման։

... Հասանէին ի վերայ արքային Պարսից, որում անուն էր Յազկերտ... հարեալ սատակէին։ Եւ յայնմհետէ բարձեալ կործանէր թագաւորութիւնն Պարսից, որոց եղև թիւ իշխանութեան նոցա ամք նՁԱ (481)։ (էջ 3, 6—7, 12—13, 14)։

Բայց Մահմէտ քսան ամ կալեալ զիշխանութիւնն... (բաղմակեաները ըստ տպագրի են—Փ. Ա.) և զկնի նորա առին զիշխանութիւնն Օմար և Ամր և Բուրաքր... և սպանին զՅազկերտ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւնն պարսից, որ տեևաց ամս շորեքհարիւր ութսուն և մի։ (էջ 68)։

Վարդան Արևելցին այնուհետև էլ օգտվել է իր սույն աղբյուրից, խիստ համառոտելով նրա հաղորդումները հատկապես Աշոտ Պատրիկի՝ արաբների դեմ կազմակերպած ապստամբության, իշխանների հետ անմիաբանության, Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների կողմից կուրացվելու, Հեշմի որդիներ Աբդլլանների իշխանության գլուխ անցնելու Մուշեղ Մամիկոնյանի, Սմբատ

<sup>32</sup> Մովսէս Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին, Քիֆլիս, 1912, էջ 267—269։

Բաղրատունու ապստամբության և այլ դեպքերի վերաբերյալ<sup>33</sup>, երբեմն միայն միջանկյալ դիմել է այլ ազդեցությունների, մասնավորապես Ասողիկի աշխատությանը<sup>34</sup>:

Հովհաննես Գրասխանակերտցու «Պատմութիւն»-ը<sup>35</sup> Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» առավել կարևոր սկզբնաղբյուրներից է, որին նա դիմել է հաճախ և ընդարձակ բառացի քաղվածքներ վերցրել նրանից: Վարդան Արևելցին նաև մանր տեղեկությունների համար էլ ուղղակի օգտվել է նրանից՝ մյուս աղբյուրներից իր քաղած նյութերը կապակցելու, լրացնելու կամ հիմնավորելու համար, ինչպես վարվել է նաև մի քանի այլ հիմնական աղբյուրներից օգտվելիս: Սակայն այս մասին ևս՝ այլ առիթով: Այժմ փորձենք բնագրական մի քանի զուգահեռներով ցույց տալ, որ իրոք Հովհաննես Գրասխանակերտցու հիշյալ աշխատությունը Վարդան Արևելցու անմիջական և հիմնական աղբյուրներից է, որին նա միաժամանակ մեծ վստահություն է ընծայել:

### Հովհաննես Գրասխանակերտցի

Եւ զկնի սորա (Քրիստափորի — Փ. Ա.) զՂևոնդ, որ էր ի փոքր եւ աատայ կացուցանեն յաթոս սրբութեան: Իսկ Ղևոնդի կալեալ զաթոս հայրապետութեան զամս երիս՝ վախճանի: Եւ զկնի սորա զՆերսէս ի զաւառէն Բաղրեանդայ ի զեղջէ Աշտարակայ...: Ի ժամանակի աստ խոսրով արքայ պարսից զօր բազում զումարեալ առաքէ հրոստկս Վարդանայ, և լինի պատերազմ սաստիկ ի դաշտին խաղամախայ. և ի մշտաջան աղօթից սրբոյն Ներսեսի անհնարին հարուածովք մաշեն զօրքն Վարդանայ զպարսիկան: Յաւուրս սորա Մախոժ... ի մկրտութեան Յիզաբուզիտ անուանեալ, որ թարգմանի «աստուած ապրեցոյց», բազում շարշարանս կրեալ ի մարդպանէ Վշնասն Վահրամայ՝ ի Դվին քաղաքի սյսակի մարտիրոսական մահուամբ ի Քրիստոսէ: Զոր բարձեալ զսուրբ մար-

### Վարդան Արևելցի

Այլ զաէր Քրիստափոր յաջորդէ տէր Ղևոնդ ամս երկու, և ապա տէր Ներսէս ամս ինն: Ի ժամանակս նորա առաքեաց խոսրով թագաւորն Պարսից հրոսակս, զի կալցեն զՎարդ. և եղև մեծ պատերազմ ի դաշտին խաղամախայ և կոտորեն զզօրսն պարսից աղօթիւք սուրբ հայրապետին Ներսիսի: Եւ յայն ժամանակս կատարեցաւ սուրբ Յիզաբուզիտ, որ է աստուած ապրեցոյց. կատարեցաւ ի Դուին՝ ի մարդպանէն Վարհամայ, զի զկնի Վարդայ՝ պարսիկք իշխէին մարդպանք, և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ Հայրապետին Ներսիսի առնթեր կաթուղիկոսարանին, շինեալ վկայարան կոփածոյ ի վերայ նորա:

Ի սոյն աւուրս Եզրաս Անգեղացի զղասս ճարտասանաց բաղմացոյց: Զկնի Ներսիսի՝ տէր Յոհանէս ամս հնգետասան. և յեա

33 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 74—75, Ղևոնդ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 112—114, 121—124, 136, 140—143, 145—157:

34 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 74—75, Ասողիկ, նշվ. աշխ., էջ 130—131: Տողատակ նոտրագրով բերված պարբերությունը ևս բառացի անվամբ է Ասողիկի երկից, ուստի այն պիտի դրվի բնագրի մեջ, ինչպես հին ձեռագիր օրինակում էլ եղել է:

35 Հ. Գրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912:

մինն սրբոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսիսի ... եղին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբբ: Սորա կալեալ զհայրապետական աթոռն զամս ինն՝ վախճանի: Եւ զկնի սորա զոմն Յոհաննէս ի Քարեղենից... որ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս ժէ՝ վախճանի: Յետ սորա ապա զՄովսէս զայրն Աստուծոյ, որ յԵղիվարդ գեղջէ...:

Յամի տասներորդի հայրապետութեան սորա և երեսներորդի առաջներորդի ամին Խոսրովայ՝ որդոյ Կաւատայ արքայի պարսից՝ լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երկու ամաց... (էջ 63—65):

Մեր եզրակացությունը ավելի ամրապնդելու համար բերենք մի **տրինակ** ևս: Մինչ այդ ասենք, որ ներկայացվող հատվածների միջև ընկած էջերում նրա աշխատությունից առնված շատ այլ բաղվածքներ էլ կան, որոնք միանգամայն վկայում են, որ Վարդան Արևելցին այն ձևովի տակ պահել է տեղանորեն և օգտագործել ամեն մի անհրաժեշտ առիթով:

### Հովհաննէս Գրասխանակերացի

Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկականս տօմարի... առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ, որ բանիրուն այն արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: ... Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք... հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր... կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Յետ այսորիկ Իսրայէլ յՈղմսոյ յաջորդէ զաթոռ հայրապետութեան: Յաւուրս սորա զԲառարայ ոմն զօրագլուխ զօրուն տաճկաց որ ի Հայք՝ վանեալ վատնէ կոտոր-

նորա տէր Մովսէս յԵղիվարդայ ամս երեսուն: Սա ի տասներորդ ամի հայրապետութեանն իւրոյ, և յերեսներորդ առաջներորդ ամին Խոսրովու, որդոյ Կաւատայ, և ի շորեքտասաներորդն Յուստիանոսի, որ զսուրբն Մովի շինեաց, եղիր Բուական հայոց և տոմար, յորում ժամանակի լցեալ էր շրջանն հինգհարիւր երեսուն և երկուց...: (էջ 57):

### Վարդան Արևելցի

Յայնմ ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրաման յԱնաստասայ՝ յօրինէ տոմար հանապաղորդ, որ մինչ խորհէր պատրիարզն ժողովով հաստատել՝ կատարի, և յաջորդէ զնա Իսրայէլ՝ զկնի վեց ամ պաշտելոյն Անաստասայ: Յաւուրս սորա զԲառարայ ոմն զօրագլուխ տաճկաց՝ որ ի Հայս, վանեալ հալածէ ներսեհ իշխանն Վրաց: Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն՝ վախճանի, և առնու զքօղն սուրբն Սահակ, որ ի Չորոփոր յԱրքունեացն: Ի յեօթն ամին սորա՝ արշաւեցին Խաղիբբ ի Հայս, և սպա-

Ճամբ սաստիւ ներսե՛հ իշխան  
Վրաց՝ փախստեայ զնա արա-  
րեալ: Իսկ Իսրայէլ կացեալ յա-  
թոս հայրապետութեան ամս  
տասն՝ վախճանի: Եւ զկնի նորա  
Սահակ կայ յաթոս հայրապետու-  
թեանն, որ հայրենօք էր ի Չորա-  
փորոյ յարքունաշէն զեղջէ...: Իսկ  
ապա յեօթներորդ ամի աթոռա-  
կայութեան սորա պատերազմ  
սաստիկ յայնմ ժարզէ Խաղրաց ի  
վերայ սաստկացեալ լինէր մեծ  
իշխանին Գրիգոր, որ և սպանաւ  
իսկ՝ և եղաւ բնդ հարս իւր: Զկնի  
սորա պաշազատէ զիշխանութիւ-  
նրս Հայոց Սմբատ Բագրատունի՝  
որդի Սմբատայ: (էջ 90—93):

նին զԳրիգոր իշխանն. և զերեցին  
զհնարաւորն իւրեանց: Եւ առնու  
զիշխանութիւնս Աշոտ Բագրա-  
տունի՝ որդի Սմբատայ: (էջ 70):

Այս կապակցութեամբ այսրանք, կարծում ենք, լիովին բավարար է:

Ուխտանեսի «Պատմութեան» Վարդան Արեւելցու համար անմիջական աղ-  
բչութիւն հանդիսանալու մասին անուղղակի վկայում է ինքը՝ Վարդան Արեւելցին<sup>36</sup>:  
Այդ որոշակի հաստատում է նաև բնագրական համեմատական բնութեամբ,  
ինչպես, օրինակ.

#### Ուխտանես

Իսկ զկիւրսնէ...: Սա էր աշխար-  
հաւ և ազգաւ ի Վրաց՝ ի գաւառէ  
Զաւախաց՝ ի զեղջէ որ կոչի Ար-  
կուտրի. և ունէր զգալրութիւն  
վասն վրաց և հայոց: Եւ երթեալ  
չերկիրն Հոռմոց բնակեցաւ անդ  
ամս հնգետասան՝ ի գաւառին՝  
որ կոչի Կողոնիայ. և բնակի անդ  
մեծ քաղաքագեղն նիկոսյոլիս  
կոչեցեալ՝ յեզր գետոյն, որ կոչի  
Գալլ: Եւ վարժեալ և ուսեալ  
զգալրութիւն նոցա... զնաց ի Հայս  
առ Մովսէս կաթողիկոսն Հայոց,  
և բնակէ առ նա ի սուրբ կաթու-  
ղիկէին որ ի Գուին... Եւ նա կա-  
ցուցանէ զնա վանաց երէց սրբոյ  
կաթողիկէին, այլ և բորեպիսկո-  
պոս՝ տալով նմա զվիճակ զգա-

#### Վարդան Արեւելցի

... որ և զկիւրսն, որ էր ազգաւ  
ի Վրաց, ի գաւառէն Զաւախայ ի  
զեղջէ Սկուտրի, և գիտէր դպրու-  
թիւն հայ և վրացի, ձեռնադրեաց  
վրաց կաթողիկոս, որ եղև յետոյ  
քաղկեդոնիկ: Քանզի ի տղայու-  
թեանն զնացեալ էր ի Յոյնս, ի  
Կողոնիա գաւառ, և բնակեալ ի  
գեօղն նիկոսյոլիս յեզր Գալլ գե-  
տոյ, որ և վարժեցաւ յոյն դպրու-  
թեամբ. և յետ հնգետասան ա-  
մին, եկն առ Մովսէս ի Գուին, և  
կացոյց զնա Վանաց երէց սրբոյ  
կաթողիկէին, այլ և բորեպիսկո-  
պոս Այրարատեան գաւառին, ամս  
եօթն. և յորժամ մեռաւ կաթողի-  
կոսն վրաց, առաքեցին իշխանք  
աշխարհին առ տէր Մովսէս, ըստ

<sup>36</sup> Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 42:

ւան Այրարատեան: Եւ կացեալ ի նմին ամս հինգ. ապա ընդ այն ժամանակս մեռանի կաթողիկոսն Վրաց: Եւ առաքեն իշխանք աշխարհին և նախարարքն հանդերձ եպիսկոպոսօքն առ Մովսէս կաթողիկոսն Հայոց՝ խնդրել իւրեանց առաջնորդ: Իսկ նա խորհուրդ արարեալ՝ զի ի տանէ իւրմէ տացէ նոցա Առաջնորդ... ձեռնադրէ զԿիրոն... Իսկ յորժամ եհաս Կիրոն ի վիճակ իւրոյ... և նուաճէ նորօք. հանդերձ առհասարակ զամենայն աշխարհն ընդ իւրով իշխանութեամբ: ...ձեռնադրէ եպիսկոպոս մի խուժիկ նեստորական, որում անուն Կիսկոշիւր, որ է խստութիւն: Քանզի և էր իսկ խիստ...: Սա եկեալ առ նա յաշխարհէն Հոռոմոց՝ ի գաւառէն Կողոնեայ՝ բնակութեամբ ի գեղջէն՝ որ կոչի Զուտարիմայ, մերձ ի նիկոպոլիս... գաւառակից միմեանց լեալ կամ գեղակից, այլև աղանդակիցք և ուսումնակիցք...: (Հատված Բ, էջ 3—5):

առաջին կարգին, զի տացէ նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս ի տանէ իւրմէ. և երթեալ նուաճեաց զամենայն երկիրն. և ապա եկն առ նա խուժիկ մի նեստորական, որ Կիսկոշիւր, այսինքն խստութիւն, որպէս եղևն, որ էր ի Կողոնիոյ, ի գեղջէն Զուտարիմայ, մօտ նիկոպոլիս. որ լեալ էին միմեանց ուսումնակիցք և աղանդակիցք: (էջ 58):

Որպեսզի որեւէ երկրնորանքի առիթ շմնա, ստորև կրէրենք Քառասուն մանկանց նահատակութեան վերաբերյալ հետևյալ համեմատելի բնագրական զուգահեռք.

### Ուխտանես

Մոռացումն եղև մեզ՝ յիշատակել զնահատակութիւնն սրբոց քառասնիցն՝ որ եղև յամբարիշտն լեկիանէ. զոր եհարց երանելի սուրբ թագաւորն Կոստանդիանոս՝ զՄաքսիմիանոս և զՄաքսինդես, և զՄաքսիմոս, և զամբարիշտն լեկիանէս... և հանեալ զհարիւրապետ ոմն հանդերձ զնդաւն իւրով ի գաւառն որ կոչի Կապուտակէք, և ի թեմն Թելախունէք, և Անատալիկէք, և Խարտանայք, և Արմենակէք, և Դաղիմոն, զի զորս գտցեն ի բրիստոնէից զօր՝ մա-

### Վարդան Արեւելցի

Իսկ սուրբն Կոստանդիանոս երարձ զՄաքսիմիանոս ամպարիշտն և զՄաքսինտէս, և զՄաքսիմոս, և զլիկիանոս անօրէն, որ եհան հարիւրապետ զոմն իւրով զնդաւն ի գաւառն Կապուտակէք, և ի թեմն Թելախունէք և Անատալիկեայք, և Խարտանէք և Արամենակէք և Դաղիմոն, շարշարել զորս գտցէ բրիստոնեայս: Յորմէ խրտուցեալք փախեան ի կողմանս Սերաստիոյ, ոմանք ի Մելեսիտն, որ է ամբոց ի լեռնակողմն, և այլք ի Տախալասոն լե-



տուսցեն ի պաշտօն կոսցն, և կամ սպանցեն շարշարանօր: ... և եկեալ հասին ի սահմանս Սեբաստիոյ. դիմեն ըստ իւրաքանչիւր յաջողութեան՝ ոմանք ի Մելեսիան, որ է ամրոց և լեռնակողմ, իսկ այլք ի Տախալասուն ... սոր ի վերայ եղեալ կոտորեցին զբազումս... Իսկ ի տեղի սպանելոցն... կոչի Եկեղեցաձոր, և սակս այնորիկ տեղիք նահատակութեան նոցա պատուին և փառասորին ի բնակչաց աշխարհին: Իսկ սուրբ քառասունքն... երթեալ բնակէին յայրի մի յեզր գետոյն՝ որ կոչի Ալիս՝ ի տեղի մի ամրոցին... որ կոչի Քաշ-Վահանայ, որ զեռես տակաւին կայ տեղիք կայարանաց սրբոցն և գիր իւրաքանչիւր անուանցն գրեալ ի տախտակս քարանցն...: Իսկ ապա յետոյ երթեալ պատմէին Լիկիանէ(ի) վասն սրբոցն...: Եւ նորա հրաման տուեալ... գտին զնոսա ի տեղւոջն... տասն և հինգ Արեգ ամսոյ... և վասն այնորիկ կարգեցար մեք զօրն զայն տօն սրբոց Քառասնիցն...: Իսկ կատարումն նահատակութեան նոցա եղև ի մարտի ինն... (Հատված Ա, էջ 85—87):

անն, որք բռնութեամբ արտաքսածեալ կոտորեցան յԵկեղեցաձորն կոչեցեալ, որ և պատուի մինչև ցայսօր: Իսկ սուրբ քառասունքն երթեալ Թաքեան յայրին՝ որ կայ ի վերայ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քաշ Վահանայ, ուր կառուցին խաչ, և գրեցին զիւրաքանչիւր անուանս ի քարին. զոր գիտացեալ պատմեցին Լիկիանեայ և հրամանաւ նորա եկեալ հանին յայրէանտի, ի հնգետասան արեգ ամսոյ. զոր Ուխթանէս տօն կարգեաց՝ որ է սկիզբն հանդիսի նոցա և կատարումն ի մարտի ինն: (էջ 41—42):

Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Տիեզերական պատմութիւն»-ը<sup>37</sup> և Վարդան Արեւելցու կողմից լայնորեն օգտագործված սկզբնաղբյուրներից է: Տվյալ իրողությունը ըստ երևույթին բացատրելի է նաև նրանով, որ այն նույնպես «տիեզերական պատմություն» է, ինչպես և Վարդան Արեւելցու աշխատությունը, ընդգրկում է լայնածավալ ժամանակաշրջան և պարունակում առատ փաստագրական նյութ: Միաժամանակ նկատելի է, որ Վարդան Արեւելցու համար այն առավել վստահելի աղբյուրներից է: Այս երկից Վարդան Արեւելցու արած քաղվածները համեմատաբար ավելի հարազատ են իրենց մայր աղբյուրին և ավելի նվազ են ենթարկված լրացումների ու այլ միջամտությունների: Եղած տարբերությունները հիմնականում Վարդան Արեւելցու կողմից կատարված համառոտագրության, երբեմն էլ քաղվածք բուն սկզբնաղբյուրի կամ

37 Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1855:

համախոս աչլ աղբյուրի հետ համեմատելու և ըստ աչղմ՝ փոքր լրացումներ կատարելու արդյունք են: Խոսենք բնագրական օրինակներով:

## Ասողիկ

Սա (Արշակ—Փ. Ա.) սպանանէ զԳնէլ եղբորորդի իւր վասն նախանձու Փառանձեմայ կնոջ նորա ի քսութենէ Տիրիթայ... նզովեալ սրբոյն ներսիսի զԱրշակ... շոգալ յաշխարհն Յունաց, փոխանակ իւր թողեալ զԽաղ եպիսկոպոս Բագրևանդայ... որոյ շտեմարանք աղբիւրացն ըստ նմանութեան մեծին Եղիայի:

Ընդ այն ժամանակս եկեալ Շապ-հոյ Պարսից արքայի յԱտրպատական՝ առ ինքն կոչէ զԱրշակ: Եւ կալեալ կապեաց\* զնա և ետ տանել ի Խորասան: (էջ: 70):

Այսպիսին է նաև հետևյալ օրինակը.

## Ասողիկ

Իսկ յետ մահուանն Սանատրկոյ թագաւորէ Հայոց Երուանդ... և սատակէ զամենայն որդիսն Սանատրկոյ, բայց միայն մնաց Արտաշէս մանուկ, զոր առեալ սանտուի նորա և Սմբատ զաշեկի նորա՝ անցանեն առ Դարեհ արքայ Պարսից սնուցանել զմանուկն: Յայսմ կասկածէ երկուցեալ Երուանդ... ի թագաւորութեանն Վեսպասիանոսի և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիչագետրս: ...

Յաւորս սորա փոխին արքունիքն յԱրմաւրայ... ի քարակտուր մի բլուր... որ աչժմ ասի Երուանդաբար: ...Հեռագոյն ըստ հիւսիսոյ քաղաք փոքր շինեալ ի վերայ

## Վարդան Արևելցի

Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբորորդի իւր վասն Փառանձեմայ կնոջ նորա ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն ներսէս, և ինքն զնայ ի Յոյնս, փոխանորդ իւր թողեալ զԽաղ եպիսկոպոս Բագրևանդայ, որոյ շտեմարանքն աղբերացան որպէս Եղիայի՝ կնոջն աչրոյ:

Ընդ այն ժամանակս Շապուհ արքայն Պարսից զայ յԱտրպատական և առ ինքն կոչէ զԱրշակ, կապէ զնա և տայ տանել յԱնուշն կոչեցեալ զղեակ: (էջ 48):

## Վարդան Արևելցի

...Եւ առնու զթագն Երուանդ... և կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ, զերծեալ մանուկ մի Արտաշէս անուն, զոր առեալ Սմբատայ՝ անկանի ի Պարսս, առ Դարեհ արքայ վերջին: Եւ Երուանդ թողու զՄիչագէտս ի Տիտոս և առնէ զնա յոյժ. և շինեալ զԵրուանդաբար, անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ, և ի նմանէ հեռագոյն շինէ զԹագարան տուն կոոց ի վերայ Ախուրանայ գետոյ, և բուրմն զնէ զԵրուանդ եղբայր իւր: (էջ 35):

\* Տաղտակում սնի տարբերակը զամ՝ կապէ, ինչպես Վ. Արևելցու հատվածում է:

Ախուրեան գետոյն և անուանեաց  
Բագարան, և անդ զբազինսն և-  
դեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրո-  
մապետ կացուցանէ: (էջ 47—48):

Հաշորդ զուգահեռ համեմատութիւնը կարող է լիովին ամրապնդել վե-  
րոնշյալ եղբակացութիւնը.

### Ասողիկ

Եւ Արղւմէլիք վախճանեալ՝ տի-  
րէ տաճկաց Վլիթ որդի նորա ամս  
Ժ: Սա յառաջնում ամի իշխանու-  
թեան իւրոյ խորհեցաւ բառնալ  
յաշխարհէս զազատագունդն Հա-  
յոց, և հրամայէ Մահմետի զօրա-  
վարին զայս առնել: Եւ նա հրա-  
մայէ Կասմայ ումեմն, որ էր  
հրամանատար ի կողմանս նախ-  
ճաւան քաղաքին՝ կոչել առ ինքն  
զնախարարսն Հայոց...: Եւ հրա-  
մայեցին յերկուս բաժանել զնո-  
սա, զոմանս յեկեղեցին նախճա-  
ւանայ, և զկէսն յեկեղեցին Խրա-  
մայ, և հրով վառեալ զեկեղե-  
ցիսն՝ այնպէս այրեցին զամենե-  
սեան ի ՃՄԳ (113 551=664)  
թուականին և զգլխաւոր նախա-  
րարսն զփայտէ կախեալ դատա-  
պարտէին...

Եւ զկանայս և զորդիս նոցա ի  
գերութիւն վարեալ, որ և զՎար-  
դան որդի Խոսրովու Գողթան  
տեառն... զվճիռ մարտիրոսու-  
թեան ընկալաւ: (էջ 124—125):

### Վարդան Արևելցի

Մեռաւ Արղրլ մէլիք, և առ ըզ-  
տեղին Վլիթ որդի նորա, որ հրա-  
մայէ Մահմետի բառնալ զա-  
զատան Հայոց ի Կասմայ ումե-  
մընէ, որ էր հրամանատար նախ-  
ճաւանի, որ խարէութեամբ հա-  
ւարեալ զնոսա, զոմանս յեկեղե-  
ցին Խրամայ, և զկէսն յեկեղե-  
ցին նախճաւանի, այրէ զնոսա ի  
ՃՄԳ (113 551=664) թուակա-  
նին, և զգլխաւոր նախարարսն  
ըզփայտէ կախեալ շարշարէին և  
զկանայս և զորդիս նոցա՝ ի գե-  
րութիւն վարեցին, ընդ որս և  
զՎահան՝ որդի Գողթան տեառն,  
որ և մարտիրոսացաւ: (էջ 72):

Բնական է, որ Ասողիկը նույնպէս իր նյութերը հավաքել է իրեն նախոր-  
դած պատմիչների երկերից, երբեմն նաև բառացի, ու զետեղել իր աշխատու-  
թյան մեջ: Այստեղից էլ վերոբերյալ հատվածների որոշ բնդհանրությունները  
Մովսես Խորենացու և Ղևոնդի երկերի համապատասխան հատվածների հետ<sup>38</sup>,  
որոնք առաջին հայացքից նույնիսկ կարող էին առիթ առնել հնթադրելու, թե  
Վարդան Արևելցին նրանցից է օգտվել անմիջաբար: Սակայն այդպես չէ, որով-  
հետև Ասողիկի և Վարդան Արևելցու բերված ու չբերված հատվածների բառացի  
նմանություններն ավելի շատ են ու ակնհայտ: Բացի այդ, նշված գեղարվեստի  
անմիջական հաշորդականությունը, որն, ասենք, առկա է Ղևոնդի երկում,

<sup>38</sup> Հմմտ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 162—166, 283—285, 295, 299—300: Ղևոնդ,  
նշվ. աշխ., էջ 31—36, Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 72:

Ասողիկի կողմից խմբագրարար փոփոխված է և ստեղծված նույն դեպքերի հաջորդական նոր շղթա, որը և տվյալ դեպքում նկատվում է Վարդան Արևելցու աշխատության մեջ: Վերջապես Վարդան Արևելցին անձամբ հաստատում է, որ ինքը ուղղակի օգտվել է Ասողիկից: Այս առնչությամբ նա գրում է. «Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք՝ զվեշտասաներորդ Յազկերտի՝ երրորդում Մարկիանոսի»<sup>39</sup>: Իրապես էլ Ասողիկի երկում կա նման բառացի հիշատակություն<sup>40</sup>, Ուստի, ավելի քան պարզ է, որ Ասողիկի «Տիեզերական պատմութիւն»-ը Վարդան Արևելցու անմիջական և կարևոր աղբյուրներից մեկն է:

Վարդան Արևելցուն ամենից առավել փաստական նյութ հայթայթեղ սկզբնաղբյուրը, թերևս, Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ն է՝ Առատ և բազմաբնույթ են հատկապես 1080—1140-ական թվականների ընթացքում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների, հայ-բյուզանդական հարաբերությունների, խաչակրաց արշավանքների, խաչակիրների՝ Կիլիկյան հայկական պետության տարածքի վրա ծավալած գործունեության, ազգային-եկեղեցական խնդիրների և պատմական անձնավորությունների վերաբերյալ հաղորդված տեղեկությունները: Շատ են քաղվածաբար վերաշարադրված փոքր ու մեծ հատվածները, սակայն սակավ չեն ևս ուղղակի բառացի առնված մասերը:

Ծանոթանանք բազմաթիվ հատվածներից մի քանիսին, որոնք միանգամայն որոշակի կհաստատեն այս իրողությունը և միաժամանակ որոշ պատկերացում կտան Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» Վարդան Արևելցու աշխատության համար ունեցած աղբյուրագիտական և բնագրագիտական կշռի ու նշանակության մասին:

### Մատթեոս Ուռհայեցի

Յայսմ ժամանակի (ՇԻԾ—Ա. Փ.) սպանաւ Վասակ իշխանն հայոց որդի Գրիգորի Մագիստրոսին և եղբայր տէր Գրիգորիսի. սա էր տուկի յԱնտիոք քաղաքին. սա սպանաւ ի շուկայ փողոցին Անտիոքայ ի ձեռն նենգաւոր ազգին հոռոմոց... և ժողովեցան զօրք նորա ի Կլայն Անտիոքու, և յայնժամ ազատագունդն Վասակայ կոչեցին զՓիլաոտոս և տան զԱնտիոք ի ձեռս նորա: ...Եւ յայնժամ բնակալեցաւ Փիլաոտոսն ի վերայ Անտիոքայ և առեալ վրէժ արեան մեծին Վասակայ Պալհաւունոյ: (էջ 213—214)

### Վարդան Արևելցի

Ի հինգ հարիւր քսան և հինգ թուին սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթողիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, ի նմին քաղաքի նենգութեամբ. և զօրք նորա ամրացեալ ի Կլայն, ետուն զքաղաքն ի Փիլարտոսն, որ բնացեալ էր յայնժամ ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ, որոյ առեալ զքաղաքն, խնդրեաց զվրեժ արեան նորա: (էջ 104):

39 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54:

40 Ասողիկ, նշվ. աշխ., էջ 79:

41 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Ահա մեկ ուրիշը.

### Մատթեոս Ուռհայեցի

Իսկ ի թուականութեանն Հայոց ի յամի Շե՛՛Ի արար ժողով հեծելոց Սուգման որդի Արդուխին և ամիրայն Սամուսատայ Պալտուխն որդի Ամիրխաղէ և յաուրս հնձոցն գան ի վերայ Ուռհայոյ: Եւ թորոս կուրապաղատն տէրն Ուռհայոյ եղև լցեալ ամենայն իմաստութեամբ... և այնու ոչ կարացին յաղթել քաղաքին: (էջ 250):

Ուշագրավ է նաև հետևյալը.

### Մատթեոս Ուռհայեցի

Յայսմ ժամանակի կատարեցաւ մարգարէութիւն սրբոյն ներսեսի հայոց կաթողիկոսին, զորս վասն Հոռմայեցւոց ելիցն խօսեցաւ... և բարձրագահ իշխանութեամբ ելեալ գային իշխանք ազգին փռանգաց... որոց էին անուանքն այսորիկ. Կոնդոփրէ, այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն հոռմայեցւոց, և նորին եղբայրն Պաղտինն: Այս Կոնդոփրէ էր, որ ունէր զթուրն և զթագն ի հետ իւր Վեսպիանոսի թագաւորին, որ կոտորեաց զԵրուսաղէմ. էր և մեծ կոմսըն որ ասէին Պեմունդ, և Տանգրի քուրորդի նորա, և կոմսն՝ որ ասի Ջնճիլ, այր ահարկու և փառաւոր, և Ռոպերդն նորմնդաց կոմսըն, և միւս այլ Պաղտինըն, գայր և յետոյ կոմսն՝ որ ասի Ծօսլին, այր հզօր և քաջ: Արդ այսքան արք հզօրք և պատերազմողք... (էջ 253—254):

### Վարդան Արևելցի

Ի հինգ հարիւր քառասուն և չորս թուին Սուքման որդի Արդուխին, և ամիրայն Սամուսատայ Պալտուխն՝ որդին Ամիր-Ղաղէ՝ գան ի վերայ Ուռհայոյ. և դարձան լի ամօթով, զի կիրապաղատն Թէոդորոս իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն:... (էջ 109):

### Վարդան Արևելցի

Յայսմ ժամանակի լնու բան մարգարէութեան սուրբ հայրապետին ներսիսի՝ որ վասն ելից փռանդացն... Եւ ելանէին արք փառաւորք զլուխք զօրաց բազմաց, որոց անուանք էին այս. Կոնդոփր, և Պաղտոյն՝ եղբայր նորա՝ յազգէ թագաւորաց. զոր ասեն ունել զթագն Վեսպիանոս՝ որ աւերեաց զԵրուսաղէմ և մեծ կոմսն Պայմունդ, և Տանկրի քուրորդի իւր, և կոմսն Ջնջիլ և Ռոպերտն՝ Որմնաց կոմսն և միւս Պաղտոյնն, և Զօսլին կոմսն՝ արք յաղթողք և բազմազօրք: (էջ—110):

Այս կապակցութեամբ հարկ է նշել հետևյալ առանձնահատկութիւնը: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից առնված նյութերը ոչ միայն պատմում են պատմական ընդարձակ ժամանակաշրջանի մասին, ոչ միայն

շատ են ու մեծ տեղ են բռնում, այլև քիչ են ընդմիջված այլուստ քաղված պատմական տեղեկություններով և ժամանակագրական միասնական հաջորդականության մեջ են մաշր աղբյուրին համապատասխանաբար: Միջարկված նյութերը ուշագրավ են հատկապես նրանով, որ շատ քիչ են առնչվում մեղ ծանոթ գրավոր աղբյուրներին և խորհելու առիթ են տալիս: Այս մասին առանձին խոսք կլինի ստորև:

Այսպիսով, կարող ենք համոզված եղբակացնել, որ Վարդան Արևելցին իր «Հաւարումն պատմութեան» մի բավականին ընդարձակ մասը (մասնավորապես՝ 104—118 էջերը) շարադրել է գերազանցապես Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հիման վրա, հաճախ կատարելով բառացի քաղվածքներ:

Ասորի բարձրաստիճան հասարակական-եկեղեցական գործիչ և անվանի մատենագիր Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն»-ը<sup>42</sup> հայ մատենագրութեանն առնչվում է սերտորեն: Հեղինակն ինքը ծանոթ է հայ ժողովրդի, մասնավորաբար Կիլիկյան հայ իրականության, պատմաքաղաքական իրավիճակին, հոգևոր-եկեղեցական և մշակութային կյանքին: Բարեկամական մերձավոր կապերի մեջ է եղել հայ եկեղեցական բարձր շրջանակների, հատկապես Ներսես Շնորհալու հետ, նրա նման նախանձախնդիր լինելով բյուզանդական եկեղեցա-քաղաքական ճնշումների դեմ աղգային եկեղեցու ինքնուրույնութունը պահպանելու դժվարին պայքարում: Այսպիսի հեղինակի երկը, որտեղ բավականին շատ է խոսվում հայ ժողովրդի ու Հայաստանի մասին, չէր կարող շարժանանալ հայերի հատուկ ուշադրությանը: Այդպես էլ եղել է: Իսկ Վարդան Արևելցին հենց այն անձնավորությունն է, որը Միխայիլ Ասորու հիշյալ երկին առնչվել է բոլորից առավել: Նա գործուն մասնակցություն է ունեցել դրա հայերեն թարգմանությանը. ըստ երևույթին կամ՝ հիմնովին մշակել ու խմբագրել է Իշոխ քահանայի կողմից նախապես կատարված հայերեն թարգմանությունը, կամ էլ՝ Իշոխ քահանան է աշակցել Վարդան Արևելցուն սույն թարգմանությունն իրագործելու համար: Ահա այս նույն երկը կարելի է առանց երկմտության ասել, որ նույնպես «Հաւարումն պատմութեան» ամենահիմնական աղբյուրներից մեկն է: Վարդան Արևելցին տեղ-տեղ նախապատվությունը տվել է նրան նույնիսկ այն դեպքերում, երբ ձեռքի տակ ունեցել է հայ հեղինակների երկերը: Նրանից առնված նյութերը զետեղված են սկզբի էջերում՝ 5—30 և վերաբերում են ըստ մեծի մասին Աստվածաշնչի թեմաներին:

Ինչպես հայտնի է, մեղ են հասել Միխայիլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանության երկու խմբագրություն, որոնք մեկը մյուսի համեմատությամբ ունեն նկատելի տարբերություններ: Մեր համեմատություններից պարզվում է, որ Վարդան Արևելցին, թեև հիմնականում օգտվել է Ա\* խմբագրությունից, բայց թերևս նաև Բ խմբագրությունից, որովհետև նրա կողմից կատարված քաղվածքները մերթ նման են մեկ՝ այս, մեկ այն խմբագրությանը: Կարելի է ըստ այսմ ենթադրել, որ Վարդան Արևելցին ձեռքի տակ է ունեցել հավանաբար իր անմիջական գործակցությամբ թարգմանված բնագ-

<sup>42</sup> Միխայիլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, նաև Երուսաղէմի 1871 թ. հրատարակությունը:

\* Ա-ով պայմանականորեն նշում ենք Երուսաղէմի 1870 թ., իսկ Բ-ով 1871 թ. հրատարակությունները, միաժամանակ դրանք համապատասխանաբար համարելով Ա և Բ խմբագրություններ:

րի սկզբնական օրինակը, որից հետո իր և մեկ ուրիշի ձեռքով ստեղծվել են հիշյալ երկու խմբագրությունները: Այս և հարակից հարցերին նույնպես անդրադառնալու ենք այլ առիթով: Այժմ փորձենք բնագրական կոնկրետ դուզահաններով ավելի հավաստի դարձնել նաև սույն աշխատության անմիջական աղբյուր հանդիսանալը:

### Միխայիլ Ասուրի

Եւ Մադիդիմոս պատրիարքի ասէ. յետ երեսուն ամի ելիցն ի դրախտէն՝ Ադամ ծնաւ զԿայէն և զԿիմայ քոյր իւր. և երեսուն ամաւ զկնի ծնաւ զԱբէլ և զԱբելուհի՝ քոյր իւր, և յետ հարիւր երեսուն ամի՝ սպանաւ Աբէլ... (Ա. էջ 6):

Որ Վարդան Արևելցին սույն հատվածը կարող էր քաղել միայն Միխայիլ Ասուրու այս երկից, հաստատվում է ոչ միայն նկատվող բառացի բացահայտ նմանությունը: Մադիդիմոս Պատրիարքին, որի խոսքերը մեջ են բերված վերոնշյալ հատվածում, ինչքան մեղ հայտնի է, հայ մատենագրության մեջ գոնե այս կապակցությամբ չի հիշատակված: Այս նույն հատվածի բովանդակությունը ծանոթանում ենք միայն այս երկի շնորհիվ. ինչպես մանավանդ Կայենի՝ Կիմա կամ Կիմաս, իսկ Աբելի, Աբելուհի անունով քոյր ունենալու մասին: Մնացածը՝ սխալ է:

Իերենք այս կարգի մեկ այլ համեմատություն:

### Միխայիլ Ասուրի

Յայնմ ժամանակի Եթովպացիքն որ լեալ էին հարկատուք Եգիպտացոցն, և գտին զնոսա. և ապա ապստամբեցին, և եկին ի վերայ Եգիպտացոց և գտին զնոսա անպատրաստս, և գերեցին և առին դանուանեալ մայրն Մովսէսի, և տարան: Եւ Մովսէս լեալ զօրավար Եգիպտոսի՝ կռուեցաւ ընդ Եթովպիայ զտասն ամ... և առ զթագուհի նոցա զՔեսրաս և զՄառի մայր իւր, և դարձաւ յԵգիպտոս քաջ և արի անուամբ: Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ և կամէր

### Վարդան Արևելցի

Ուստի զամս երեսուն ողբացեալ Ադամայ Եւայի... և ծնան զԿայէն... քերք միով Կիմաս կոչեցեալ, և զկնի երեսուն ամաց ծնան զԱբէլ և զԱբելուհի քոյր նորա: Եւ զկնի այլ ևս երեսուն ամի սպան Կայէն զԱբէլ... (էջ 5):

### Վարդան Արևելցի

Իսկ Եթովպացոցն՝ որ էին հարկատուք Եգիպտացոցն՝ ապրստամբեալ ասպատակեցին և գերեցին զԵգիպտոս, և զմայրագիրն Մովսէսի. և զնացեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ. և առ զթագուհի նոցա զՔեսրաս. և զմայր իւր. և դարձաւ յԵգիպտոս. և նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ, որ է Քերմոթիս. և ի մեռանելն Մառեայ, թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այր նորա զՔսանթիս շարշարիչն Իսրայէլի սպանանել զՄովսէս, և սպան զնա

սպանանել զնա, բայց պատկառէր  
ի կնոջէ իւրմէ:

Եւ մեռաւ Մառի, և թաղեաց զնա  
Մովսէս, և առաքեաց այրն Մա-  
ռեայ զՔսանթիս շարշարիչն Իս-  
րայելի սպանանել զՄովսէս՝ և յա-  
ռաջեաց Մովսէս և սպան զնա և  
ինքն փախեաւ ի Մադիամ: (Ա. էջ  
42—43):

Մովսէս և փախեաւ ի Մադիամ...:  
(էջ 18—19):

Բառացի նմանութիւնն, ինչպէս տեսնում ենք, բացահայտ է: Այս կա-  
պակցութեամբ զոհանանք հետեւյալ վերջին օրինակով, որը ավելի հաստատուն  
և հստակ կդարձնի մեր համոզումն ու պատկերացումը հիշյալ երկու երկերի  
աննշութիւնների մասին:

### Միխայիլ Ասորի

### Վարդան Արևելցի

Մովսէս լեալ հարիւր քսան ա-  
մաց կատարի...: Եւ առ Յեսու  
որդի նաւեայ զգաւազանն և զիշ-  
խանութիւն Մովսիսի, և առաջնոր-  
դեաց ժողովրդեանն Իսրայելի ա-  
մբս քսան և եթն: Ի վեցերորդ ա-  
մի իշխանութեանն Յեսուայ Դանա-  
տս եղբայր Եգիպտոսի թագաւորի  
չիսուն դստերօք զչիսուն որդիս  
եղբօր իւրոյ կոտորեաց. բաց ի  
լինկեայ՝ որ յետ նորա թագաւո-  
րեաց՝ սա է յամենայն կողմանց  
աշացեալն:

Ի տասն և ութերորդ ամին Յե-  
սուայ Փիւնիկս և Կաղմոս ի Թե-  
բացոց Եգիպտոսէ յԱսորիս եկեալ՝  
թագաւորեցին Տիւրոսի և Սիդոնի.  
և անուամբ նոցա կոչեցաւ երկիրն  
Փիւնիկէ և տուն Կաղմեայ: (Ա,  
էջ 51—53):

Աստուածանօթն Մովսէս կա-  
տարեցաւ հարիւր և քսան ամաց,  
և առ զգաւազան նորա Յեսու նա-  
ւեայ ամս քսան և եօթն: Ի վեցե-  
րորդի ամին Յեսուայ Դանատս  
եղբայր Եգիպտոսի թագաւորի  
Եգիպտացոց չիսուն դստերօք զչի-  
սուն որդիս եղբօր իւրոյ կոտո-  
րեաց, և լինոսս զերծեալ թագաւո-  
րեաց, զոր ասեն ամենայն ուստեք  
աշացեալ. զի իմաստուն էր: Յու-  
թևտասն ամին Յեսուայ Փիւնիկս և  
Կաղմոս ի թեբացոց յԱսորիս ե-  
կեալ թագաւորեցին, և աշխարհն  
կոչեցաւ Փիւնիկէ, և տուն Կաղ-  
մեայ: (էջ 20):

Որ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ը Վարդան Արևելցու աշ-  
խատութեան համար հանդիսացել է անմիջական աղբյուր, հայտնի է: Առավել  
համոզիչ ու մանրամասն այդ ցույց է տվել հատկապէս Կ. Մելիք-Օհանջան-  
յանը<sup>43</sup>: Նշենք նաև, որ Վարդան Արևելցին ինքը այդ մասին անուղղակի վկա-  
յութիւն էլ է թողել<sup>44</sup>: Ուստի կրկին հաստատելով սույն ճշմարտութիւնը կու-

43 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, աշխատասիրութեամբ Կ. Մե-  
լիք-Օհանջանյանի, Առաջաբան, էջ 4-4Ծ:

44 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 147:



դենայինք պարզապես ավելացնել, որ նկատվածներից բացի, կան և այլ փոխառություններ: Իսկ մի շարք էջերում առկա փոխադարձ ընդհանրությունները<sup>45</sup>, ըստ երևույթին, իրապես կապվում են մի այլ աղբյուրի երկու հեղինակներին էլ ծանոթ լինելու փաստի հետ: Այս կապակցությամբ ունենք որոշ դիտողություններ, որոնց մասին խոսք կլինի այլ առիթով:

Մինչ այդ մի քանի խոսք անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալի մասին:

Բանասիրության մեջ այն տեսակեան է հայտնված, թե իբր Վարդան Արևելցին օգտագործել է նաև Ագաթանգեղոսի, Անանիա Շիրակացու, Քովմա Արծրունու, Սամվել Անեցու, Մխիթար Գոշի համապատասխան պատմագրական երկերը, ինչպես նաև վրաց ժամանակագրությունները: Մեր կարծիքով, նման որոշակի եզրակացության համար բավարար հիմքեր չկան: Թեև հիշյալ երկերի և Վարդան Արևելցու աշխատության մեջ նկատելի են որոշ բնագրական ընդհանրություններ, սակայն աղբյուրագիտական մեր որոնումները ցույց են տալիս, որ դրանք ավելի շուտ բխում են հիշյալ երկերին և միաժամանակ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան»-ը աղբյուր ծառայած այլ պատմագրական հուշարձաններից:

Ագաթանգեղոսի երկի վերաբերյալ արդեն եղրակացրել ենք, որ Վարդան Արևելցին ոչ թե նրանից, այլ Հովհան Մամիկոնյանի (Զենոբ Գլակ) աշխատությունից է օգտվել: Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրութեան», Քովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի և Մխիթար Գոշի «Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու» պարագային էլ կարող ենք ավելացնել, որ հիշյալ երկերի միևնույն նյութի մասին պատմելը դեռևս դրանց միջև ուղղակի առնչության գոյության ապացույց չէ: Տվյալ դեպքում բանն այն է, որ այն տողերը, որոնք, ըստ երևույթին, առիթ են տվել ենթադրելու, թե իբր դրանք Վարդան Արևելցու աշխատությանն են փոխանցվել հիշյալ երկերի միջոցով, գալիս են նախորդ հեղինակների՝ Եվսեբիոսի, Մովսես Խորենացու, Սերեոսի, Ղևոնդի և մեզ չհասած երկերից: Այնպես որ, կարծում ենք, հիշյալ երկերը Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աղբյուրների շարքը դասելու բավարար հիմքեր իրոք որ չկան:

Ինչ վերաբերում է Սամվել Անեցու «Ժամանակագրութեան»-ը, պետք է ասել, որ այն նաև իր ընդգրկած ժամանակաշրջանով և մասամբ կառուցվածքային բնույթով, բավարար ընդհանրություններ ունի Վարդան Արևելցու երկի հետ: Մի շարք դեպքերում, ինչպես ասենք Աստվածաշնչյան սերունդների, հայ և այլ ժողովուրդների թագավորների, կայսրերի, եկեղեցական պետերի վերաբերյալ ժամանակագրական ցուցակների, սասունցիների, Ապուսեթի սպանության, Բուղաչի շարագործությունների, Աշոտ Երկաթի 8 տարվա թագավորության, Վահան Բաղացեցու կաթողիկոսության, ապա «Վրաց դաշնադիր» լինելու պատճառով՝ գահից զրկվելու, փոխարենը Ստեփանոսին գահ բարձրացնելու, Գիոգենես և Միքայել կայսրերի, Մանազկերտի կովի ու այլ իրադարձությունների վերաբերյալ հատվածներում դրանք, թվում է, տարակուսելի չեն: Սակայն մանրամասն քննությունից ավելի հավանական է դառնում, որ այդ ընդհանրությունները պայմանավորված են ոչ թե երկու երկերի ուղղակի

45 Հմմտ. Կիրակոս Գանձակեցի. Եջվ. աշխ., էջ 71, 76, 85—87, 89 և այլն, Վարդան Արևելցի. Եջվ. աշխ., էջ 88—89, 90—91 և այլն:

առնչությամբ: Գարձյալ իրողությունն այն է, ըստ մեզ, որ Սամվել Անեցին տվյալ հատվածների համար օգտվել է Աստվածաշնչից, Եվսերիոսի, Մովսես Խորենացու, Սերետսի, Ղևոնդի, Հովհաննես Գրասխանակերտցու և այլ մեզ հայտնի գրավոր աղբյուրներից, Կիրակոս Գանձակեցին՝ Սամվել Անեցու աշխատությունից, իսկ Վարդան Արևելցին՝ այս բոլորից, բայց ոչ՝ Սամվել Անեցու երկից: Համենայն դեպս, լիովին հավաստի հիմք չկա պնդելու, թե Վարդան Արևելցին օգտագործել է Սամվել Անեցու «Ժամանակագրություն»-ը:

Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» մեջ բավականին առատ փաստագրական տեղեկություններ են պահպանված Վրաստանի քաղաքական պատմության, մանավանդ XII—XIII դարերի ընթացքում Վրաստանի ռազմաքաղաքական հզորացման, տնտեսական և հոգևոր-մշակութային վերելքի տարիներին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ: Այս իրողությունը ևս վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: Մ. Բրոսսեն իր վերոնշյալ ֆրանսերեն աշխատության մեջ ներգրավել է այդ բոլոր տեղեկությունները<sup>46</sup>: Հարկ է այս կապակցությամբ հիշել նաև Լ. Մելիքսեթ-բեկի աշխատանքը<sup>47</sup>: Հ. Մանանդյանը և ուրիշներ ևս դրանք օգտագործել, մեկնաբանել ու գնահատել են: Այնպես որ, դրանց պատմաճանաչողական արժեքի մասին որոշակի պատկերացում գոյություն ունի, սակայն բնասիրության և աղբյուրագիտության տեսանկյունից դեռևս չեն հետադոստված:

Պարզ է, որ այդպիսով Վարդան Արևելցու սույն երկը վրաց XII—XIII դարերի ժամանակագրություններին բովանդակությամբ հաճախ է առնչվում, բայց և այնպես առ այսօր դեռ չի ճշտված, թե այդ աղբյուրը անմիջակա՞ն է, արդյոք, թե միջնորդաբար է ստեղծված, կամ, պարզապես, բովանդակության ընդհանրության արդյունք է: Դժվար է որոշակի պատասխանելը, առկա նմանությունները ստույգ եզրակացության համար բավարար չեն: Բացի այդ, նա օգտագործել է նաև այն հայ աղբյուրները, որոնք պարունակել են հարուստ տեղեկություններ վրաց և Վրաստանի, հայ-վրացական սերտ առնչությունների մասին: Հիշենք նաև, որ նա ապրել և գործել է այնպիսի մի ժամանակաշրջանում ու երբեմն Վրաստանին մերձակա վայրերում, որ կարող էր ականատես ու ականջալուր լինել հասարակական շատ իրադարձությունների: Այնպես որ, Վարդան Արևելցին հիշյալ հայ աղբյուրներից տեղեկություններ փոխ առնելով և մասամբ ուրույնաբար իր լսած ու տեսած համապատասխան իրողությունները դրանց միահյուսելով վրաց ժամանակագրության հետ ստեղծել է այն աղբյուրը, որը առիթ է տվել ենթադրելու, որ նա իբրև ուղղակի օգտվել է վրաց ժամանակագրություններից: Բայց այդ, ինչպես արդեն ասացինք, հավաստի հիմքեր չունի, և մեզ ավելի հավանական է թվում, թե նա վերոնշյալ միջոցով է միայն հնարավորություն ունեցել պատմելու վրաց և Վրաստանի մասին:

Այսքանը Վարդան Արևելցու կողմից օգտագործված պատմագրական բնույթի մեզ հասած աղբյուրների կապակցությամբ: Այլ բնույթի ու բովանդակության մեծ ու փոքր աղբյուրներին կանդրադառնանք առանձին, ինչպես սկզբում նշել ենք, այս կարգի մի շարք հարցերի հետ միաժամանակ:

<sup>46</sup> M. F. Brosset, Additions et éclaircissements..., բազմաթիվ էջերում:

<sup>47</sup> Մելիքսեթ-բեկ, վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա., Երևան, 1934, էջ 130—131, 196, 211, 220 և այլն, հատ. Բ., Երևան, 1936, էջ 25—28, 31, 32 և այլն:

ПАЙЛАК АНТАБЯН

## ИСТОЧНИКИ «ИСТОРИИ» ВАРДАНА АРЕВЕЛЦИ

(Резюме)

Результаты, достигнутые по сей день в филологии, неудовлетворительны с точки зрения сколько-нибудь убедительного источниковедческого анализа «Истории» Вардана Аревелци (XIII в.). В этой связи специальная исследовательская работа еще не проводилась, за исключением отдельных высказываний по частным вопросам.

Указанное историческое сочинение, имеющее широкий хронологический и географический охват, естественно связано с большим числом источников. Этим еще больше подчеркивается необходимость и полезность источниковедческого исследования. Чрезвычайно трудно дать определенный ответ на все вопросы, связанные с проблемой источников памятника, и поэтому в данной статье автор ограничился лишь изучением вопроса непосредственного или опосредованного использования первоисточников Варданом Аревелци.

На основе скрупулезного источниковедческого анализа в статье установлены и уточнены все те первоисточники, которыми пользовался Вардан Аревелци. Выясняется, что для последнего источником служили соответствующие сочинения почти всех предшествующих армянских историков. Непосредственно были использованы историографические сочинения Мовсеса Хоренаци, Лазара Парпеци, Павстоса Бузанда, Себеоса, Мовсеса Каланкатуаци, Левонда, Ованнеса Драсханакертци, Ухтанэса, Степаноса Таронаци (Асохика), Матэоса Урхаеци, Михаила Сирийца, Киракоса Гандзакеци. В числе непосредственных первоисточников Вардана Аревелци Библия, а также «Хронология» Евсевия Кесарийского.

Не имеют фактической основы или еще нуждаются в дополнительной аргументации предположения об использовании Варданом Аревелци исторических сочинений Елише, Агатангелоса, Самвела Анеци, а также «Грузинской хронологии». Хотя и имеется определенная общность в сообщениях на одну и ту же тему между ними и «Собранием истории» Вардана Аревелци, но эта общность является следствием связей с другими источниками.

P. P. ANTABIAN

## LES SOURCES DE L'«HISTOIRE» DE VARDAN AREVELTSI

(Résumé)

Les recherches philologiques accomplies jusqu'à présent ne sont point satisfaisantes du point de vue d'une analyse tant soit peu convaincante des sources de l'«Histoire» de Vardan Aréveltzi (XIII<sup>e</sup> siècle).

Outre quelques jugements relatifs à un certain nombre de questions particulières, aucune recherche spéciale n'a été consacrée à ce sujet.

L'oeuvre historique en question, sa chronologie et sa géographie supposent naturellement un grand nombre de sources. Cela souligne une fois de plus la nécessité et l'utilité d'une recherche sur ces sources. Il est extrêmement difficile de donner une réponse précise à toutes les questions liées au problème des sources de cette oeuvre, c'est pourquoi l'auteur de l'article se limite seulement à l'étude de la question de l'utilisation directe ou indirecte des sources par Vardan Aréveltzi.

Une analyse scrupuleuse des sources a permis d'établir et de préciser toutes les sources utilisées par Vardan. Il apparaît que ce dernier s'est servi des oeuvres de presque tous les historiens arméniens qui lui sont antérieurs. Il a eu directement recours aux oeuvres de Movses Khorénatsi, de Ghazar Parbétsi, de Faust de Byzance, de Sébéos, de Movses Kalankatvatsi, de Ghévond, de Hovhannes Draskhanakertsi, d'Oukhtanes, de Stépanos Taronatsi (Assoghik), de Mathévos Ourhaétsi, de Michel le Syrien, de Kirakos Gandzakétsi. Parmi les sources directes de Vardan Aréveltzi on peut citer aussi la Bible et la "Chronique" d'Eusèbe de Césarée.

La supposition concernant l'utilisation par Vardan Aréveltzi des oeuvres historiographiques d'Eghiché, d'Agathange, de Samvel Anétsi, ainsi que de la "Chronologie géorgienne", n'est pas fondée ou doit être encore argumentée. Bien que l'on observe des points communs entre les témoignages de ces auteurs et le "Recueil d'Histoire" de Vardan Aréveltzi quand ils touchent les mêmes sujets, cette communauté est le résultat de la communauté leurs sources.